

ՓՄՁ սուբյեկտների արտադրական հզորությունների վերազինման աջակցության ծրագիր

Ծրագիրը նպատակ ունի նպաստել արտադրության և արտադրության սպասարկման ոլորտում գործող ՓՄՁ սուբյեկտների ֆինանսական և ներդրումային հնարավորությունների ընդլայնմանը, արտադրության ծավալների ավելացմանը և մրցունակության բարձրացմանը:

Աջակցության ուղղությունները

Արտադրական հզորությունների վերազինման աջակցության ծրագրի շրջանակներում Հիմնադրամի կողմից ՓՄՁ սուբյեկտներին ցուցաբերվում է տեխնիկական և ֆինանսական աջակցություն՝ հետևյալ ձևերով.

1. նպատակային փոխառության տրամադրում,
2. նպատակային փոխառության տրամադրում՝ Հիմնադրամի գործընկեր առևտրային բանկերի միջոցով, որոնց հետ հարաբերությունները կարգավորվում են պայմանագրերով,
3. Հիմնադրամի գործընկեր առևտրային բանկերի կողմից տրամադրված վարկի տարեկան տոկոսադրույքի սուբսիդավորում՝ համաձայն առևտրային բանկերի հետ կնքված պայմանագրերի,
4. լիզինգային ծառայությունից օգտվելու դեպքում՝ վարձավճարի մասնակի կամ լրիվ սուբսիդավորում:

1. Նպատակային փոխառության տրամադրման պայմանները

Հ/հ	Տեխնիկական միջոցի արժեքը /հազ. դրամ/	Փոխառության տոկոսադրույքը /%/	Փոխառության առավելագույն ժամկետը /տարի/
1.	մինչև 5000	7	5
2.	5000-10000	7	6
3.	10000 և ավելի	7	7

Տեխնիկական միջոցի արժեքի 15%-ի չափով սահմանվում է կանխավճար:

Նպատակային փոխառությունը տրամադրվում է հետևյալ ընթացակարգով.

Քայլ 1 Փոխառություն ստանալու համար շահառուն, կազմակերպության արտադրական հզորությունների վերազինմանն աջակցություն ստանալու մասին հայտին կից, Հիմնադրամ է ներկայացնում անհրաժեշտ փաստաթղթերը:

Քայլ 2 Հիմնադրամի ֆինանսական կոմիտեն, ընդունած հայտը 10-օրյա ժամկետում քննարկում է և որոշում կայացնում հայտին դրական կամ բացասական եզրակացություն տալու մասին:

Քայլ 3 Դրական եզրակացություն ստացած շահառուին /այսուհետ՝ փոխառու/ Հիմնադրամը տրամադրում է տեղեկանք՝ փոխառություն տրամադրելու իր համաձայնության մասին:

Քայլ 4 Փոխառուն, Հիմնադրամի կողմից տրամադրված տեղեկանքը ներկայացնում է Մատակարարին և վերջինիս սպասարկող բանկում ունեցած հաշվարկային հաշվին փոխանցում սահմանված կանխավճարը: Մատակարարը՝

ստանալով փոխառությունը տրամադրելու մասին Հիմնադրամի գրավոր համաձայնությունը և կանխավճարի վճարումը հավաստող փաստաթուղթը, փոխառուի հետ կնքում է տեխնիկական միջոցի առուվաճառքի պայմանագիր: Փոխառուն իր հաշվին ապահովագրում է տեխնիկական միջոցը:

Քայլ 5 Փոխառուն, առուվաճառքի և պայմանագիրը, հաշիվ-ապրանքագիրը, տեխնիկական միջոցի մաքսազերծման հայտարարագրի պատճենը, տեխնիկական միջոցի ապահովագրության վկայագիրը ներկայացնում է Հիմնադրամ: Հիմնադրամը, անհրաժեշտ փաստաթղթերը ստանալուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում Փոխառուի հետ կնքում է փոխառության և տեխնիկական միջոցի գրավի պայմանագրեր, ինչպես նաև տրանսպորտային միջոցի դեպքում՝ պետական ավտոտեսչությունից ստանում տրանսպորտային միջոցի արգելադրման մասին տեղեկատվություն: Հիմնադրամը՝ տեխնիկական միջոցի գրավի իրավունքը գրանցելուց հետո 2 աշխատանքային օրվա ընթացքում, տրամադրում է փոխառություն՝ գումարը փոխանցելով Մատակարարին սպասարկող բանկում ունեցած հաշվարկային հաշվին:

2. Նպատակային փոխառության տրամադրում՝ Հիմնադրամի գործընկեր առևտրային բանկերի միջոցով

Սույն ծրագրի շրջանակներում արտադրության ոլորտում գործող ՓՄՁ սուբյեկտների արտադրական հզորությունների վերազինման աջակցությունը ցուցաբերվում է Հիմնադրամի կողմից նպատակային փոխառությամբ առևտրային բանկին /այսուհետ՝ Գործակալ բանկ/ տրամադրված գումարների հաշվին: Աջակցության այս ուղղությունը տրամադրվում է ՓՄՁ սուբյեկտներին ֆինանսական աջակցության ծրագրի իրականացման ընթացակարգին համապատասխան:

3. ՓՄՁ սուբյեկտների արտադրական հզորությունների վերազինման նպատակով առևտրային բանկերի կողմից տրամադրված վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորում

Սույն ծրագրի շրջանակներում արտադրության ոլորտում գործող ՓՄՁ սուբյեկտների արտադրական հզորությունների վերազինման աջակցությունը ցուցաբերվում է առևտրային բանկերի /այսուհետ՝ Գործակալ բանկ/ կողմից՝ տեխնիկական միջոց ձեռք բերելու նպատակով տրամադրված վարկերի տոկոսադրույքների մասնակի սուբսիդավորման միջոցով: Աջակցության այս ուղղությունը տրամադրվում է ՓՄՁ սուբյեկտներին տրամադրված առևտրային վարկերի տոկոսադրույքների մասնակի սուբսիդավորման ծրագրի իրականացման ընթացակարգին համապատասխան:

4. Լիզինգային ծառայությունից օգտվելու դեպքում վարձավճարի մասնակի կամ լրիվ սուբսիդավորում

Սույն ծրագրի շրջանակներում արտադրության ոլորտում գործող ՓՄՁ սուբյեկտների կողմից լիզինգային ծառայություններից օգտվելով՝ տեխնիկական միջոցների ձեռքբերման /օգտագործման/ դեպքում՝ ՓՄՁ սուբյեկտներին ցուցաբերվում է ֆինանսական աջակցություն՝ լիզինգային վարձավճարի մասնակի կամ լրիվ սուբսիդավորմամբ:

